ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY
АРХЕОЛОГИЯ

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ*, ԴԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ**

DOI:10.57155/IVUS6931

ՍԱՆԱՀԻՆԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ-ԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱՆԳՍՏԱՐԱՆՆԵՐԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՏԱՊԱՆԱՏԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Սանահին, Կյուրիկյաններ, Զաքարյաններ, իշխաններ, դամբարան, տապանաքարեր, պեղումներ, գտածոներ, հնագիտություն, ճարտարապետություն:*

Մուտք

Հայոց իշխանների և արքաների իրենց հայրենի տիրույթներում վերջին հանգիստը գտնելու ցանկությունը արտահայտված է մի շարք փաստերով: Մասնավորապես, Սահակ Պարթևի մահանալուց հետո, ըստ Մովսես Խորենացու. «զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայի հանդերձ աշակերտակցօքն և տիկնաւն Մամիկոնեից սորին նուաւ որում անուն էր Դստրիկ կին Վարդանայ ստրատելատի՝ տարեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօն»[1]: Փավստոս Բուզանդն էլ վկայում է, որ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսի մարմինը Ծոփքից տարան Եկեղյաց գավառ և թաղեցին իր հոր կալվածքի Թիլ ավանում[2]: Ըստ ավանդության, Ավարայրի ճակատամարտի նահատակներից Տաճատ Գնթունու մարմինը ևս ամփոփել են իր տիրույթներում՝ Զովունիի Սուրբ Վարդան եկեղեցում[3]:

---

* Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հնագիտական խմբի ղեկավար, hnagetyan18@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 12, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 30, 2023:

** ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, պ.գ.թ., dianamirijanyan@gmail.com

1 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց,* աշխ. ***Մ. Աբեղյան*** և ***Ս. Յարութիւնեան,*** Տփղիս, Առազատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1913, էջ 356:

2 **Փավստոս Բուզանդ,** *Հայոց պատմություն*, Երևան, 2015, էջ 13:

3 **Ա. Տեր-Մինասյան,** «Միանավ եկեղեցի-վկայարանները վաղմիջնադարյան Հայաստանում», *Հայոց սրբերը և սրբավայրերը*, խմբ. ***Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան,*** Երևան, 2001, էջ 264:

Բագրատունյաց շրջանից սկսած հստակ է, որ իշխանական և արքայական տներն ունեին իրենց հոգևոր կենտրոնները, որտեղ և թաղվում էին: Գավիթներն ի հայտ եկան 10 դ.-ից, դրանց մի շարք գործառույթների մեջ ներառվեց նաև մեմորիալ դերը՝ այդպիսով դառնալով աշխարհիկ և հոգևոր վերնախավի տապանատունը[4]:

Արդեն 13-րդ դ. իշխանական տներն իրենց համար վանքային համալիրների կազմում կառուցում են առանձին տապանատներ՝ նախատեսված միայն իշխանական տան անդամների համար, ինչպես օրինակ Պռոշյանների հանգստարանը Գեղարդավանքում[5], Օրբելյաններինը՝ Նորավանքում[6], Մամիկոնյան-Համազասպյաններինը՝ Բարձրաքաշում և այլն: Նորավանքում գավիթի կառուցման մասին հիշատակում է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, ըստ որի, 1261 թ. Սմբատը Նորավանքում կառուցում է հրաշակերտ մի ժամատուն՝ իր նախնիների գերեզմանների վրա[7]: Կ. Մաթևոսյանը հստակեցնում է, որ Սյունյաց պատմիչի հիշատակած գավիթը կից է Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցուն, այլ ոչ Ս. Կարապետին[8]:

Ըստ արձանագրության, Նորավանքի Օրբելյանների տապանատունը կառուցվել է 1275 թ. Տարսայիճ Օրբելյանի կողմից, իր եղբայր Սմբատի համար, որը մահացել էր 1273 թ. Թավրիզում, նրա աճյունը բերվել էր Նորավանք, այնուհետև տեղափոխվել տապանատուն[9]:

ՍԱՆԱՀԻՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ: 979 թ., Սմբատ Տիեզերակալի հրովարտակով Սանահինի վանքը հռչակվում է եպիսկոպոսանիստ, միաժամանակ դառնալով Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոնը: Ուստի պատահական չէ Կյուրիկյան իշխանների ցանկությունը՝ մահվանից հետո ևս վայելել Սանահինի հովանավորությունը:

10-րդ դարում Սանահինում է հուղարկավորվում Լոռիի թագավորության հիմնադիր Գուրգեն (Կյուրիկե) Բագրատունին, որի տապանաքարը գտնվում է վանքի բակում, Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի տակ (նկ. 1)*: Տապանը եռանկյունաձև է, վերին անկյունային հատվածն ունի գեղեցիկ մշակում և երկու տողից բաղկացած արձանագրություն (նկ. 2).

---

4 **Ս. Մնացականյան,** *Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան*, 1960, էջ 160:

5 **Վ. Հարությունյան,** *Հայկական ճարտարապետության պատմություն,* Երևան, 1992, էջ 307:

6 **Կ. Մաթևոսյան,** *Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները,* Երևան, 2017, էջ 18-23:

7 **Ստեփանոս Օրբելյան,** *Սյունիքի պատմություն,* Երևան, 1986, էջ 331:

8 **Կ. Մաթևոսյան**, նշվ.աշխ., էջ 12-17:

9 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 334-335:

* Հոդվածի նկարները տե՛ս ներդիրում:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՈՐԳԷՆԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ՈՐԴԻ ԱՇՈՏՈՅ ՈՂՈՐՄԱԾԻ[10]

Գուրգեն թագավորը մահացել է 989 թ., ըստ Ջալալյանցի՝ այստեղ թաղված է եղել նաև Գուրգենի ավագ որդին՝ Դավիթ Անհողինը, սակայն ցավոք, այժմ որևէ հստակ փաստ չկա այդ մասին: Ըստ Ջալալյանցի՝ գերեզմանի վրա հնում երկկամար խորան-վկայարան է եղել, որը 1836 թ. քանդել է Հարություն եպիսկոպոս Բարսեղյանցը[11]: Վանքի շրջապարսպի հարավարևելյան եզրում սրբատաշ բազալտով XIX դ. վերջում կառուցված դամբարանը պատկանում է Արղության-Երկայնաբազուկներին, որոնք համարվում են Զաքարյանների ժառանգորդը, և պատահական չէ, որ հանգստարանի համար ևս շարունակել են Զաքարյանների ավադույթը՝ ամփոփվել Սանահինում (Հուլավույան տիրապետության ժամանակ Զաքարյանների տոհմը իլխանների արքունիքում կոչվում էր «Արղութ», որը հոմանիշ է Մխարգրձելի տոհմանվան և նշանակում է «երկայնաբազուկ»: 18-րդ դարի վերջին, երբ Սանահինի կալվածատեր Մխարգրձելիները մտան ռուսական ազնվականության շարքերը, ստացան Արղության-Երկայնաբազուկ ազգանունը):

***Զաքարյանների տապանատունը**: Զաքարյաններն իրենց ստեղծած պետությունը համարելով Բագրատունիներիիրավահաջորդը, միաժամանակ շարունակեցին ամփոփվել Կյուրիկյան Բագրատունիների հոգևոր կենտրոնում (նկ. 3-5): Զաքարյանների դամբարանը գտնվում է համալիրի պարսպապատ հատվածից դուրս, կենտրոնական հուշարձանախմբից մոտ 60 մ հարավ-արևելք, Ս. Հակոբ եկեղեցուց արևմուտք[12]: 2019 թ. պեղվել են Ս. Հակոբ, Ս. Հարություն եկեղեցիների[13], իսկ 2021-2022 թթ., Զաքարյանների տոհմական դամբարանի հարակից տարածքներն ու հուշարձանախումբ տանող ճանապարհի հատվածը: Դամբարանը բավականին բարդ ճարտարապետական լուծումներով կառույց է, որում ընդգծվում են մի քանի շինարարական փուլեր: Այն կարելի է բաժանել երկու հիմնական հատվածների: Արևելյան մասը, որ կառույցի վաղագույն հատվածն է, ցածրանիստ թաղակապ սրահ է՝ արևմուտքից լայն բացվածքով, արևելքից՝ սահմանազատված խաչքարերով: Դեռևս 19-րդ դարասկզբի հեղինակ Հով-*

---

10 *Դիվան հայ վիմագրության*, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին ***Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան,*** Երևան, 2012, էջ 101, № 174:

11 **Ա. Ջալալյանց,** *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան,* մասն Ա, Տփղիս, 1842, էջ 10:

12 Դամբարանի և հարավարևելյան հուշարձանախմբի մյուս կառույցների հնագիտական ուսումնասիրություններն ու պեղումները բաղկացուցիչ մասն են ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան դրամաշնորհով անցկացվող խոշոր ծրագրի (պատվիրատու՝ «Հայկական հուշարձաններ վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիա»), ըստ որի նախատեսվում էին հուշարձանների վերականգնում և տարածքի բարեկարգում:

13 **Ա. Նալբանդյան**, «Նորահայտ տապանագրեր Սանահնից», *Հայագիտության հարցեր*, հ. 1 (25), Երևան, 2022, էջ 161-177:

հաննես Զրիմեցին, խոսելով Սանահինի հիմնադրման մասին, ասում է, որ այն սկզբնավորվել է 4-րդ դարասկզբին, և կարծիք է հայտնում, որ Զաքարյան տոհմի տապանատան արևելյան կողմում գտնվող ավերակները այդ հնագույն եկեղեցուն են պատկանում: Կարո Ղաֆադարյանը միանգամայն իրավացիորեն մերժում է այդ տեսակետը, ընդգծելով, որ նման ճարտարապետական հորինվածք ունեցող, այսինքն արտաքուստ ուղղանկյուն և ներքուստ խաչաձև գմբեթավոր տաճարը չի կարող 4-րդ դարի լինել, նա այն թվագրում է 11-12-րդ դդ.[14]: Ճարտարապետ Հովհաննես Խալփախչյանն արդեն, Զաքարյանների դամբարանի արևելյան հատվածի կառույցը թվագրում է 10-11-րդ դդ.[15]: Վերջին տարիների պեղումների արդյունքում հստակեցվեց դամբարանի արևելյան հատվածի ճարտարապետությունը, և կարևոր հայտնագործություններով լրացվեցին նախորդ ուսումնասիրողների կարծիքները: Սրահի այս հատվածի երկու կողմերում կան մեկական, հատակագծում ուղղանկյուն հիմքերով, կլոր հատակագծով, գմբեթավոր մատուռներ, որոնք մուտքեր են ունեցել արևմտյան կողմից: Այս երկու մատուռների արանքում, այսինքն թաղակիր սրահի վրա, երկրորդ հարկում, եղել է ուղղանկյուն մատուռ՝ արևելյան կողմում խորանով: Կենտրոնական ուղղանկյուն մատուռը ժամանակագրորեն ավելի ուշ է, քան կողային երկու կլոր մատուռները, ինչը հատկապես ակնհայտ է դառնում այն հանգամանքով, որ դրա երկու կողմերում արված կրաշաղախով և մանր քարերով լիցքի հետևանքով փակվել են հյուսիսային մատուռի դեկորատիվ զույգ որմնասյուներն ու քանդակազարդ որմնախարիսխները, որոնք, ի սկզբանե, անկասկած պետք է երևային: Մատուռի մուտքը եղել է հարավից, որին մոտեցել են հարավում արված աստիճանահարթակով:

Երեք մատուռներն էլ կիսավեր վիճակում են. հյուսիսային մատուռից պահպանվել են հիմքերն ու հարավային պատը, հարավային մատուռից՝ միայն հիմքերը, իսկ կենտրոնականից՝ միայն արևելյան պատի մի հատված: Պատերի շաղախի մեջ առկա խաչքարերի և կավե սալիկների բազմաթիվ բեկորները վկայում են, որ մատուռներն ինչ-որ ժամանակ ենթարկվել են վերանորոգումների:

Արևմտյան հատվածը, ինչպես մուտքի բարավորին պահպանված շինարարական արձանագրությունն է վկայում, կառուցվել է 1189 թվականին Զաքարե և Իվանե Զաքարյանների կողմից[16]: Վերջիններս ընդարձակել են այն, վերածելով տոհմական դամբարանի և իրենց հոր՝ Սարգսի աճյունը ամփոփել են կառույցի հին՝ արևելյան հատվածի կամարի ներքո, որտեղ հետագայում ավելացվել է ևս երկու տապանաքար: Ըստ Անանիա Սեբաստացու ժամանակագրու-

---

[14] **Կ. Ղաֆադարյան,** *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները,* Երևան, 1957, էջ 9-10:

[15] **О. Халпахчьян,** *Архитектурные ансамбли Армении,* Москва, 1980, с. 193.

[16] *Դիվան հայ վիմագրության*, պրակ IX, Լոռու մարզ, էջ 107, արձ. № 194:

թյան, այստեղ թաղվել է նաև Զաքարե Զաքարյանը[17]*: Երեք տապանաքարերի արևելյան կողմում կանգնած են եղել խաչքարեր, որոնցից այժմ պահպանվել է Սարգսի հիշատակին կանգնեցված արձանագիր, շքեղ խաչքարը*[18]*, իսկ մյուսներից մնացել են միայն պատվանդանները: Արևմտյան հատվածը կանգուն է ամբողջությամբ, շարված է բազալտի սրբատաշ քարերով, կիսագլանաձև թաղով և երկթեք տանիքով ու ծածկասալերով սրահ է, որտեղ թաղված են Զաքարյանների շառավիղները՝ Արղության-Երկայնաբազուկների տոհմի 17-19-րդ դդ. ներկայացուցիչները:*

Դամբարանի՝ ժամանակագրորեն տարբեր երկու մասից լինելու հանգամանքը չէր կարող աննկատ մնալ մեծ հայագետ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի համար, որը նշում է, որ դամբարանը բաղկացած է հին և նոր երկու մասերից, որոնցից հնում ամփոփված են Սարգիսը, Վահրամը և Զաքարեն: Նա ավելացնում է նաև, որ հին հատվածի վրա կա երեք փոքր խորան[19]*:*

Ազգագրագետ Լալայանը նույնպես նշում է, որ կամարակապ փոքր սրահը գտնվում է երեք մատուռների տակ, որոնք նա նկարագրում է հետևյալ կերպ. «սա բաղկացած է մի երկար և կամարաձև, կողքերին մի մի կլոր և գմբեթավոր փոքր մատուռներից»[20]*:*

Ղաֆադարյանը նշում է, որ արևելյան, այսինքն՝ բուն տապանատունը, ունի վերին հարկ, որը «մի փոքր մատուռ է»: Նա նաև ավելացնում է, որ արևելյան՝ կրկնահարկ հատվածն ավելի հին է և կարող է կառուցված լինել մի քանի տասնամյակ առաջ[21]*:*

Հ. Եղիազարյանը նույնպես նշում է, որ արևելյան ցածր թաղով հատվածի «տանիքին եղել է փոքր մատուռ՝ արևելյան կողմում փոքր սեղանով», իսկ դրա երկու կողմերում գտնվող կլոր հատակագծով կիսավեր շինությունների իսկությունը պարզաբանված չէ[22]*:*

Ըստ Խալփախչյանի, որին և մեջբերում է Շախկյանը. «արևելյան սրահի վրա՝ առանցքային տեղադրությամբ, և երկու կողմերում՝ սիմետրիկ, ավելի ցածր դիրքով գտնվել են մատուռներ, միջինը հատակագծում՝ ուղղանկյուն, եզրայինները՝ կլոր, երկաստիճան»[23]*:*

Ինչպես տեսանք, ուսումնասիրողները բոլորն էլ հակված են այն մտքին, որ դամբարանի երկու՝ արևելյան և արևմտյան մասերը համաժամանակյա չեն և

---

17 *Մանր ժամանակագրություններ*, հ. II, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 136:

18 *Դիվան հայ վիմագրության*, պրակ IX, Լոռու մարզ, էջ 108, արձ. № 195:

19 **Ս. Ջալալյանց**, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մասն Ա, Երևան, 2016, էջ 30-31:

20 **Ե. Լալայեան**, «Բորչալուի գաւառ, Նշանաւոր վանքեր», Ա, *Ազգագրական հանդէս*, 1901, № 7-8, էջ 391:

21 **Կ.Ղաֆադարյան**, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1957, էջ 35-36:

22 **Հ. Եղիազարյան**, «Սանահնի վանքը», *Էջմիածին*, 1958, № 12, էջ 57:

23 **Գ. Շախկյան**, *Լոռի. պատմության քարակերտ էջերը*, Երևան, 1986, էջ 92:

արևելյան երկհարկանի բարդ կառույցը ավելի վաղ է, քան 1189 թ. Զաքարյանների կառուցած արևմտյան հատվածը: Այսպիսով՝ ի տարբերություն արևմտյան պարզ կառուցվածքով թաղակիր սրահի, արևելյանը չափազանց բարդ կառույց է. թաղածածկ դամբարան, երկու կողմերում մատուռներ, երկրորդ հարկում՝ խորան:

Պեղումները. *Դամբարանի շուրջը և ներսում, մատուռների հիմքերին մոտ մաքրման և պեղման աշխատանքների ընթացքում հետազոտեցինք և հաշվառեցինք տեղում առկա բոլոր քարերը, որոնց մի մասը, մեր կարծիքով, ժամանակին օգտագործվել են լիցքի կամ շարվածքի մեջ: Քարերի մեջ առկա են մեծ ու փոքր բազմաթիվ սրբատաշ որմնաքարեր, տապանաքարեր, պատվանդաններ, խաչքարերի բեկորներ, ճարտարապետական զանազան մանրամասներ, որոնց թվում՝ կամարների, պատուհանների, բազրիքի, քիվերի և այլ դետալներ:*

Որմնաքարերից հատկապես ուշագրավ է հարավային մատուռի վրա դրված արձանագիր քարը (96 × 46 սմ): Արձանագրության սկզբում փորարգիր խաչ է, որից հետո եռատող արձանագրությունը. †ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ/ ՊՈՂՈՍԵՄԱՅՆ ՌԱՄԱԶԵՆՑ/ 1881 ԱՄԻ: Ինչպես պարզվում է արխիվային մի փաստաթղթից, սինոդի որոշմամբ, նույն՝ 1881 թ., սանահնեցի Պողոս Ռամազեանցը ձեռնադրվել է քահանա[24]:

Դամբարանի արևելյան կողմում մաքրման և պեղման աշխատանքների ընթացքում բացվեցին տարբեր չափերի քարերով շարված, յոթ ուղղանկյուն գետնախարիսխ-պատվանդան, որոնցից չորսի տապանաքարերը իրենց տեղում են (նկ. 5): Մյուսների տապանաքարերը ժամանակին տեղահանվել են: Այս պատվանդանները շատ դեպքերում խարխլված են կամ սեղմված հողի մեջ: Կարևոր է այն հանգամանքը, որ դրանք շատ ավելի երկար են, քան դրանց վրա դրված տապանաքարերը: Մեր համոզմամբ, տեխնիկական այդ հնարամտությունը արված է այն նպատակով, որպեսզի հիմնապատվանդանի այդ հատվածում տեղադրվեն խաչքարերի բնիկներով ուղղանկյուն պատվանդանները, որոնցից երեք հատ կա տարածքում: Այս պատվանդանների վրա դրված տապանաքարերը երկլանջ գագաթով են, դրանցից միայն մեկն է արձանագիր[25]:

Դամբարանից հարավ-արևելք բացվեցին մի շարք հարթ սալատապաններ, որոնցից մի քանիսին առկա են մարդու ուրվագծային պատկերներ: Առհասարակ, Սանահնի վանական համալիրի հարավարևելյան հուշարձանախմբի տա-

---

[24] ՀԱԱ, ֆ.56, ց.5, թղթ. 112, Սինոդի օրագրությունները-1881 թ., 401 թերթից, վավ. 195, թ. 228 և շրջ., բնագիր, ձեռագիր: Սինոդի օրագրությունը՝ Պողոս Ռամազեանցին քահանա ձեռնադրելու մասին: Նյութը տրամադրելու համար մեր շնորհակալությունն ենք հայտնում արխիվագետ Արմեն Ասատրյանին:

[25] *Դիվան հայ վիմագրության*, պրակ IX, կազմեցին ***Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան,*** Երևան, , 2012, էջ 110:

րածքում նախկինում հայտնի և 2019-2022 թթ. պեղումներով բացված բազմաթիվ տապանաքարերից միայն 22 սալատապաններն էին արձանագիր[26] *(աղ. 1)*[*]*:*

Պեղումներից հայտնաբերված գտածոները *հիմնականում խեցեղենի բեկորներ են, որոնք բաժանվում են երկու խմբի. ա) Շինարարական խեցեղեն, բ) Կենցաղային խեցեղեն, որոնք իրենց հերթին բաժանվում են ջնարակված և անջնարակ խեցեղենի:*

Շինարարական խեցեղենը *հիմնականում հանդես է գալիս կիսագլանաձև և հարթ կղմինդրի տասնյակ բեկորներով, ինչը հաստատում է, որ մինչև դամբարանի՝ Ջաքարյանների կառուցած հատվածի շինարարությունը, արևելյան կողմի վաղ կառույցը և մասնավորապես՝ երեք մատուռները եղել են կղմինդրածածկ: Ուշագրավ է այն, որ որոշ հարթ կղմինդրների եզրապատերը ջնարակապատ են: Դրանք ջնարակված են կանաչ, շագանակագույն, փիրուզագույն երանգներով (աղ. 2) և նույնպես թվագրվում են 12-13-րդ դդ.*[27]*: Կան նաև կավե հարթ սալիկներ, որոնք որոշ դեպքերում մակերեսին ունեն եռանկյունաձև ելուստներ, որոնցով հենվել են մեկը մյուսի վրա: Սալիկների լայնությունը 24 սմ է, հաստությունը՝ 3 սմ:*

Կենցաղային խեցեղենը *հիմնականում հանդես է գալիս 12-13-րդ դդ. անոթների բեկորների տեսքով, որոնց մեջ քիչ չեն նաև կարմրափայլ, կոկած մակերեսով նրբիրան անոթների բեկորները: Որոշ դեպքերում նկատվում են կարմիր ներկով գունազարդման դրսևորումներ: Կավե անոթի կարմրափայլ մի բեկորի վրա կա շրջանաձև կոճակ-ելուստ, որի կենտրոնում ապակու փշրանք է ամրացրած: Ընդելուզման կամ ակնեղենով զարդարելու տեխնիկայով զարդարված կարասներ գտնվել են Անիից և Դվինից և թվագրվում են 10-12-րդ դդ.*[28]*:*

Սանահնի պեղումներից հայտնաբերված ամենանշանակալի գտածոները քանդակազարդ ճակատոններն են, որոնք հարդարել են կիսափողրակաձև կղմինդրների ճակատային մասերը (աղ. 3): Սրանց գագաթները սուր են, ստորոտը՝ հարթ: Սրանցից երկու նմուշ հայտնաբերվել էր 2019 թ. պեղումների ժամանակ[29]*: 2021-2022 թ. գտնվեցին ևս յոթը, որոնցից հինգի վրա խաչերի քանդակներ են, երկուսի վրա՝ բուսական նախշեր: Նման պատկերազարդ ճակատոն-*

---

26 **Ա. Նալբանդյան**, «Նորահայտ տապանագրեր Սանահնից», *Հայագիտության հարցեր*, հ. 1 (25), Երևան, 2022, էջ 169-174:

* Հոդվածի աղ. 1, աղ. 2, աղ. 3-ը տե՛ս ներդիրում:

27 Համաժամանակյա ջնարակված կղմինդրեր գտնվել են Սրվեղի վանական համալիրի 2021-2022 թթ. և Տավուշ բերդի 2021-2022 թթ. պեղումների արդյունքում (բանավոր տեղեկատվության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում հնագետներ Մ. Սաֆարյանին և Տ. Ալեքսանյանին):

28 *Հայկական խեցեգործություն. 9-13-րդ դդ.*, խմբ. ***Գր. Գրիգորյան***, Երևան, ՀՊԹ, 2014, էջ 26-27:

29 **Ա. Նալբանդյան**, «Նորահայտ տապանագրեր Սանահնից», *Հայագիտության հարցեր*, հ. 1 (25), Երևան, 2022, էջ 166-168:

ներ հայտնաբերվել են Դվինից[30], Զվարթնոցից[31] և Էջմիածին քաղաքում 1979 թ. 5-6-րդ դդ. թվագրվող բազիլիկ եկեղեցու ավերակների մոտ[32]: Այստեղից գտնված նմուշները հատկապես իրենց ձևով շատ նման են մեր օրինակին, սակայն եկեղեցու և խեցեղենի հետ միասին թվագրվում են վաղ միջնադարով: Այս երևույթը բնորոշ է վաղ միջնադարին, իսկ զարգացած միջնադարում, երբ կղմինդրե ծածկերը հիմնականում փոխարինվեցին քարե ծածկասալերով, այն աստիճանաբար վերացավ: Սակայն որոշ դեպքերում կղմինդրածածկ են եղել նաև զարգացած միջնադարի եկեղեցիները, ինչպիսին է օրինակ Արցախի Հանդաբերդը[33]: Սանահինի պեղումների շերտագրությունը և զանազան գտածոների միջավայրը մեզ թույլ չի տալիս դրանք թվագրել վաղ միջնադարով և ավելի հավանական է՝ դրանք պատկանեն 10-12-րդ դարերին: Սրանք, ինչպես նաև զարդաքանդակ և անզարդ կավե սալերը, օգտագործվել են պատերի լիցքերի մեջ (հատկապես դա ակնհայտ է Զաքարյանների դամբարանին կցակառույց մատուռների պարագայում), ուստի պատկանել են ավելի վաղ կառույցի, քան դամբարանն է:

Այսպիսով, Սանահինը այն եզակի վանական համալիրներից է, որտեղ սկսած 10-րդ դարից մինչև 19-րդ դարը կատարվել են արքայական և իշխանական թաղումներ: Զաքարյանների իշխանական դամբարանի շրջակայքի պեղումները առավել հստակեցրին կառույցի ճարտարապետական կերպարը և հաստատեցին շինության տարբեր հատվածների տարաժամանակյա լինելու հանգամանքը: Նորահայտ ուշագրավ գտածոները լրացրին միջնադարյան վանական համալիրների նյութական մշակույթի մասին տեղեկությունները՝ հիմք ստեղծելով նոր պրպտումների համար:

---

30 **Գ. Քոչարյան**, «Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն», *ԲԵՀ*, 2, 2016, էջ 34:

31 **Դ. Միրիջանյան**, «Վաղ միջնադարյան շինարարական խեցեղենի մի տեսակի մասին», *Էջմիածին*, 2010, թիվ 11, էջ 75:

32 **Գ. Կարախանյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Պ. Հարությունյան**, «Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ», *ԲԵՀ*, 2, 1992, էջ 158, **Դ. Միրիջանյան**, նշվ. աշխ., էջ 76:

33 Հ. **Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան**, *Հանդաբերդի վանքը և նրա պեղումները*, Երևան, 2009, էջ 40, 91:

ARMAN NALBANDYAN, DIANA MIRIJANYAN

SANAHIN AS A ROYAL AND PRINCELY CEMETERY

Key words: Sanahin, Kyurikian dynasty, Zak‘arian princes, tomb, tombstones, excavations, finds, archaeology.

The desire of Armenian princes and kings to find the last rest in their native possessions is expressed by a number of facts. The royal and princely houses had their own spiritual centers, where the representatives of these houses were buried. While before the construction of vestibules (*gavit‘*) privileged persons were buried in the courtyards of churches (Tat‘ew, Vahanavank‘, Noravank‘), after the appearance of *gavit‘s* they also became burial places of clerics and secular nobility.

In 979, when the Sanahin Monastery was proclaimed episcopal see by the decree of King Smbat II of Armenia, it also became the spiritual center of the Kyurikian kingdom. Therefore, it is no coincidence that the desire of the Kyurikian princes was to enjoy the patronage of Sanahin after their death.

The famous sepulcher of the Zak‘arians is located outside the walled part of the complex, about 60 meters southeast of the central group of monuments, to the west of the St. Hakob Church. As part of the archaeological research of the sepulcher and the other structures of the southeastern group of monuments, in 2019 the St. Hakob Church and the Holy Resurrection Church, and in 2021–2022 the territory adjacent to the family sepulchre of the Zak‘arians with the section of the road leading to the complex were excavated. The research and excavations carried out in the territory of the sepulcher of the Zak‘arians gave significant results both in terms of dating the construction horizons and clarifying the cultural layers.

АРМАН НАЛБАНДЯН, ДИАНА МИРИДЖАНЯН

САНАИН КАК ЦАРСКАЯ И КНЯЖЕСКАЯ УСЫПАЛЬНИЦА

Ключевые слова: Санаин, династии Кюрикянов и Закарянов, князья, гробница, надгробия, раскопки, находки, археология.

Армянские князья и цари стремились обрести вечный покой в родных владениях, поэтому царские и княжеские дома имели свои духовные центры, где хоронили представителей своих династий. Если до постройки притворов знать хоронили во дворах церквей (Татев, Ваганаванк, Нораванк), то с их

появлением они стали местами захоронения как духовной, так и светской знати.

В 979 году, когда Смбат Патриарх провозгласил монастырь Санаин епископским престолом, он стал духовным центром царства Кюрикянов. Поэтому неслучайно желание князей Кюрикян пользоваться покровительством Санаина даже после смерти.

Знаменитая гробница Закарянов находится за пределами обнесенной стеной части комплекса, примерно в 60-и м к юго-востоку от центральной группы памятников, к западу от церкви Св. Акопа. Во время археологических исследований гробницы и других сооружений на юго-востоке памятника в 2019 году были раскопаны церкви Св. Акопа, Св. Воскресения, а в 2021-2022 гг. – территория, прилегающая к родовой гробнице Закарянов и участок дороги, ведущий к комплексу памятников. Исследования и раскопки, проведенные в районе гробницы Закарянов, дали значительные результаты в плане датировки рабочих горизонтов и уточнения культурных слоев.